ՀՏԴ 172

Ջոն Ռոլսի «Արդարությունը որպես անաչառություն» հայեցակարգի անկյունաքարերը. ուտիլիտարիզմի և ինտուիցիոնիզմի քննադատությունը

Համլետ Սիմոնյան

Հանգուցային բառեր. *անտեղյակության քող, հանրային պայմանագիր, հավասարության նախնական դիրք, հասարակություն, ազատություն, բարիք, բաշխում*

Նախաբան

Սոցիալական արդարության՝ որպես փիլիսոփայական երևույթի հրատապությունն ու անհրաժեշտությունը երբեք չափազանցված չեն. ներկայումս թեմային առնչվող խնդիրների բազմազանությունն ու ապակենտրոնացվածությունը փաստում են, որ թե՛ արևմուտքի երկրների, թե՛ Հայաստանի հանրատնտեսական, քաղաքական դաշտերում տարատեսակ մեխանիզմների և ընթացակարգերի ստեղծման (որդեգրման) և զարգացման հսկայական բացեր կան: Ռոլսի տեսությունն այս իմաստով փորձում է ուրույն կերպով լուծում տալ հանրային արդարությանը վերաբերող մի շարք խնդիրների՝ մասնավորապես անդրադառնալով հանրային հաստատություններին ու դրանց պատշաճ գործունեությանը: Աշխատանքի խնդիրներից են ցույց տալ արդարության՝ որպես հանրա-փիլիսոփայական առանցքային երևույթի տարորոշումը քաղաքական փիլիսոփայության համատեքստում, ինչպես նաև վերհանել դրա գործառության համար անհրաժեշտ հիմնաքարերը՝ ըստ Ռոլսի: Հոդվածի նպատակն է քննադատական վերլուծության միջոցով ներկայացնել տեսության հիմնադրույթները՝ դրանք կապելով հասարակության ներսում տեղի ունեցող գործընթացներին (խոսքը հիմնականում բարիքների բաշխմանն է վերաբերում), ցույց տալ արդարության ռոլսյան ուսմունքի գերակայությունը բարոյագիտական այլ ուսմունքների նկատմամբ, ինչպես նաև անդրադառնալ որոշ տեսանկյունների, որոնք Ռոլսին դարձրել են քննադատության թիրախ:

Հայեցակարգի հիմնադրույթները

20-րդ դարում արդարության հղացքի հայեցակարգման գործում անուրանալի ավանդ թողած ամերիկացի քաղաքական մտածող Ջոն Ռոլսը իր «Արդարության տեսություն» մագիստրալային տեսության մեջ

առաջ քաշեց **«արդարությունը որպես անաչառություն» (justice as fairness)** հայեցակարգը, որի հենքի վրա էլ հնարավոր էր դառնում դուրս բերել ու սահմանել արդարության ռոլսյան երկու սկզբունքները. վերոնշյալ հայեցակարգը, ինչպես նաև երկու սկզբունքները, չնայած քննադատությունների մեծ ալիքին, որը հետևեց աշխատության հրատարակմանը, առանցքային նշանակություն ձեռք բերեցին հանրային արդարությանը վերաբերող փիլիսոփայական մտայնություններում:

Աշխատանքի հենց առաջին գլխում հեղինակը սահմանում է այն հայեցակարգային հիմքը, որի շուրջ պետք է կառուցի «արդարությունը որպես անաչառություն» հայեցակարգը՝ ակնարկելով վերջինիս հիմնական գծերի մասին: Այս առիթով նախևառաջ կարևոր է նկատել, որ մտածողը արդարությունը քննարկում է որպես հանրային հաստատությունների առաքինություն: «Արդարությունը սոցիալական ինստիտուտների առաջնային առաքինությունն է, ինչպես որ ճշմարտությունը՝ մտքի համակարգերինը» [6],- գրում է Ռոլսը և այստեղից էլ հանգում նրան, որ ոչ իրավական հաստատություններն ու օրենքները պետք է բարեփոխվեն: Հաշվի առնելով վերը բերված փաստը, այնուամենայնիվ, չպետք է կարծել, որ մտածողն այսկերպ երկրորդական պլան է մղում անհատին՝ որպես արդարության սուբյեկտ: Արդարությունը նշանակում է, որ յուրաքանչյուր անհատ ունի հավասար իրավունքներ և ազատություններ, որոնք չեն կարող նվազեցվել կամ մերժվել՝ փոխարենը ծառայելով որևէ այլ անձի կամ նույնիսկ ամբողջ հասարակության օգտին: Ռոլսը սա անվանում է **անձեռնմխելիություն՝ հիմնված արդարության վրա (an inviolability founded on justice):** Այստեղ արդեն նկատելի են Ռոլսի տեսության անհատակենտրոնության նախասաղմերը, ինչպես նաև հայեցակարգային-արժեքաբանական հակասությունները Ա. Բերլինի հետ: Հանդես գալով արժեքային փլուրալիզմի դիրքերից՝ Բերլինն այն համոզմանն էր, որ հասարակության ներդաշնակության ապահովման, հիմնարար բոլոր արժեքների ու նպատակների պատշաճ իրականացման համար հարկավոր է իրավիճակային փոխզիջումայնություն, այն է՝ որոշ արժեքների իրագործման համար զոհաբերել մյուսները՝ կախված իրավիճակից: Մասնավորապես անդրադառնալով ազատությանը՝ Բերլինը գրում է. **«Այնուամենայնիվ ճիշտ է, որ որոշ մարդկանց ազատությունն ինչ-որ ժամանակ պետք է կրճատվի՝ հանուն մյուսների ազատության ապահովման»** [4]: Նման դիրքորոշմանը Ռոլսն ուղղակիորեն չէր կարող նախապատվություն տալ, ուստի ամրապնդելով արժեքային մոնիզմի

առավելությունը՝ ընդգծում էր ամեն անհատի՝ հավասար իրավունքներ և ազատություններ ունենալու հանգամանքը:

«Արդարությունը որպես անաչառություն» հայեցակարգի քննարկման համատեքստում կարևոր է հասկանալ, թե ինչպես է Ռոլսը սահմանում հասարակությունը, և ինչ հարաբերություններ են ունենում մարդիկ հասարակության մեջ: Սահմանելով հասարակությունը որպես փոխադարձ օգուտի համար համագործակցային համարձակ ձեռնարկում՝ հեղինակը նշում է, որ չնայած մարդիկ հասարակության մեջ համագործակցաբար աշխատում են շահավետ նպատակների համար, այնուամենայնիվ նրանց մոտ առկա է շահերի ինքնություն: «Թեև որևէ հասարակություն փոխադարձ օգուտի համար համագործակցային համարձակ ձեռնարկում է, այնուամենայնիվ սովորաբար այն բնութագրվում է ինչպես շահերի բախումով, այնպես էլ՝ համընկմամբ: Շահերի համընկնում կա, քանի որ հանրային համագործակցությունը բոլորի համար հնարավոր է դարձնում ավելի լավ կյանք, քան կլիներ, եթե յուրաքանչյուրը պարտադրված լիներ ապրելու իր սեփական ջանքերով: Շահերի բախում կա, քանի որ մարդիկ անտարբեր չեն, թե ինչպես են իրենց համագործակցությամբ ստեղծված ավելի մեծ օգուտները բաշխվում, քանի որ իրենց նպատակներին հետամուտ լինելու համար նրանցից յուրաքանչյուրը նախընտրում է ավելի մեծ, քան ավելի քիչ մասնաբաժին: Հարկավոր է սկզբունքների հավաքակազմ օգուտների այս բաժանումը որոշադրող զանազան սոցիալական կարգադրումների միջև ընտրելու և պատշաճ բաշխիչ մասնաբաժինների շուրջ համաձայնություն երաշխավորելու համար: Այս սկզբունքները սոցիալական արդարության սկզբունքներն են. հասարակության հիմնական հաստատություններում դրանք տրամադրում են իրավունքների ու պարտականությունների հատկացման եղանակ ու սահմանում հանրային համագործակցության օգուտների ու բեռների **համապատասխան** բաշխումը» [6]: Կարճ ասած, հասարակության մեջ մարդկանց փոխներգործունեության հետևանքով առաջացած բարիքների/բեռների բաշխումը պետք է ունենա որոշակի հավասարակշռություն: Ռոլսն իրականում զարգացնում է բաշխիչ արդարության՝ նախարդիության մտքին բնորոշ թեզը, որը լավագույնս իր ձևակերպումն ստացել է Արիստոտելի ուսմունքում. **«Արդար է այն, ինչը համամասնական է»** [3]: Առաջադրելով **«երկրաչափական համամասնություն»** եզրույթը՝ Արիստոտելը պնդում էր, որ բարիքի/չարիքի բաշխումը պետք է լինի համամասնական: Անհամամասնություն առաջանում է, երբ մարդ

ստանում է ավելի շատ բարիք, քան իրեն բաժին է հասնում, կամ ստանում է ավելի քիչ չարիք, որ իրեն պետք է բաժին հասներ [3]: Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ Արիստոտելը, ինչպես իր ուսուցիչ Պլատոնը, իր ուսմունքի հիմքում ուներ հինհունական պոլիսակենտրոն մտածողության խորը կնիքը, որի շրջանակում էլ բաշխիչ արդարության վերջնակետը ներդաշնակ պոլիսն էր՝ խիստ դերաբաշխումով ու սոցիալ-քաղաքական կյանքում մարդկանց միջև հստակորեն տեսանելի տարբերություններով: «Նրանք երկուսն էլ իրենց հայեցակարգերը կառուցում են նույն հղացքի վրա, որոնք արտահայտում են նախարդիության աստիճանակարգություններ ենթադրող մտահորիզոնի հիմնական կողմնորոշումները» [2]: Ռոլսը, թեև որդեգրելով բաշխիչ արդարության անտիկ ուսմունքներին հատուկ որոշ գծեր, հակադարձում է անտիկ մտահորիզոնում գերակշռող այն գաղափարին, որ մարդիկ ի բնե անհավասար են: Ընդհակառակը՝ ազատական փիլիսոփան ընդգծում է մարդկանց հավասարությունը, որն էլ լավագույնս դրսևորվել է արդարության իր երկու սկզբունքներում: Ռոլսը անդրադառնում է նաև արդարության համընդհանուր ըմբռնմանը՝ նշելով, որ. «Եթե հասարակության մեջ կա արդարության հանրային ըմբռնում, ապա այդ հասարակությունը համարվում է **լավ կարգաբերված»** [6]: Սա այն հասարակությունն է, որը կառուցարկված է իր անդամների օգուտը առաջ տանելու համար, որտեղ յուրաքանչյուրն ընդունում է ու գիտի, որ մյուսները ընդունում են արդարության նույն սկզբունքները, և հանրային հաստատությունները հիմնականում բավարարում են ու հայտնի են որպես այդ սկզբունքները բավարարող հաստատություններ: Չնայած իր ժամանակի հասարակությունները հեռու էին լավ կարգաբերված լինելուց, այսինքն՝ մարդիկ կարող էին անհամաձայնություն ունենալ այն բանի շուրջ, թե որ սկզբունքները պետք է սահմանեն իրենց համագործակցային միության հիմնական կանոնները, սակայն մտածողն այն կարծիքին էր, որ մարդիկ, այնուամենայնիվ, կարող են ունենալ արդարության զգացում, ուստիև հասկանալ, ձևավորել ու հետևել հասարակության բարիքին հանգեցնող հայեցակարգի:

Հեղինակի՝ «արդարությունն իբրև անաչառություն» հայեցակարգը քննարկելիս հարկ է առանձնացնել որոշ անկյունաքարային գաղափարներ, որոնք օգնում են հնարավոր դարձնել այդ անաչառությունը: «Արդարությունն իբրև անաչառություն» գաղափարի հիմքում ընկած է հավասարության նախնական դիրքում անաչառության հայեցակարգը, որն էլ վերածվում է արդարության սկզբունքների: Հասարակական ինստիտուտ-

ներում սրանց կիրառումը պետք է անաչառ գործարքի հետևանք լինի և հանգեցնի արդար արդյունքների [7]: Հարց է առաջանում. հասարակության կազմակերպման ինչպիսի՞ ձև կընտրեին բանական մարդիկ, եթե նրանք լինեին անկախության և **հավասարության նախնական դիրքում** և սկսեին համագործակցության սիստեմ մշակել: Այս ամենն էլ ավելի մանրամասն բացատրելու համար Ռոլսը դիմում է հասարակական դաշինքի գաղափարին: **«Արդարությունը որպես անաչառություն գաղափարը օրինակն է այն բանի, ինչը ես անվանում եմ հանրային պայմանագիր (social contract)» [6]:** Մտածողի համոզմամբ՝ հանրային պայմանագիրը համարժեք կաղապար է արդարության սկզբունքների դրսևորման համար, քանի որ համաձայնության անաչառությունն ապահովվում է նրանով, որ մասնակիցները համաձայն են այն սկզբունքներին, որոնց պետք է հետագայում ենթարկվեն: «Արդարությունը որպես անաչառություն» տեսության գաղափարն այն է, որ արդարությունն այստեղ ներկայանում է որպես համաձայնության օբյեկտ: Հանրային համագործակցության շրջանակներում մարդիկ հավասարության նախնական դիրքում ընտրում են այն սկզբունքները, որոնք էլ ծառայում են հասարակության կառուցվածքի ստեղծմանն ու զարգացմանը: Պայմանագրի նպատակը արդարության սկզբունքների որոշումն է հավասարության վիճակից: Հավասարության նախնական դիրքը համապատասխանում է ավանդական պայմանագրականությանը ներհատուկ «բնական վիճակ» եզրույթին: Ինչ վերաբերում է բնական վիճակին, Ռոլսը կարծում է, որ սա ամենևին էլ հավասարության վիճակ չէ, որովհետև որոշ մարդիկ ունեն ավելի շատ բանական տաղանդներ, նախնական ռեսուրսներ, ավելի մեծ ուժ կամ վաճառքի գերիշխանություն: Այսպիսինները, բնականաբար, ի վիճակի են ավելի մեծ արտոնություններ ունենալ՝ հետևապես ստիպելով մնացածին գնալ զիջումների: Բնության այսպիսի անորոշությունները ազդում են բոլորի վրա, բայց կան մարդիկ, ովքեր ավելի լավ են կարողանում ելք գտնել դժվար իրավիճակից, ուստի վերջիններս չեն համաձայնի դիմել հանրային պայմանագրի, մինչև բնությունը չամրագրի նրանց բնական առավելությունները: Այսպիսի փաստը, անխոս, անարդար է՝ ըստ Ռոլսի: Եվ քանի որ նմանատիպ բնական (նախնական) առավելությունները անցանկալի են, դրանք չպետք է ոչ մի կերպ արտոնություն տան մարդուն կամ էլ թերացնեն նրան արդարության սկզբունքները որոշելու համար: Ուստի հարկավոր էր մի նոր բան, որը կկանխեր մարդկանց՝ իրենց կամայական առավելություններից օգտվելը: Ռոլսը տալիս է սրա բանալին՝ ի հայտ բերելով

իր հայտնի **«անտեղյակության քող» (veil of ignorance)** կոչվող մտային փորձը, ըստ որի՝ արդարության սկզբունքները ձևակերպող անհատները չունեն կարևոր և բազմակողմանի տեղեկություն իրենց մասին: Վերոնշյալ անտեղյակության քողը բացառում է մարդկանց տեղեկացվածությունն իրենց պաշտոնի, մասնագիտության, տաղանդի, առողջության, ֆիզիկական ուժի, խավային պատկանելության, արժանիքների ու կարողությունների, բարիքի անհատական հայեցակարգի վերաբերյալ: Այս ամենն իր հերթին կբացառի, ըստ Ռոլսի, որևէ հատուկ շահերի պաշտպանություն կամ ներքին պայմանավորվածություն՝ ի վնաս փոքրամասնության: Ռոլսը անդրադառնում է նաև քաղաքական կուսակցություններին՝գրելով. «Քաղաքական կուսակցությունները չգիտեն իրենց հասարակության մասնավոր հանգամանքները, այն է՝ չիմանալ հասարակության տնտեսական, քաղաքական իրավիճակը, մշակույթի և քաղաքակրթության զարգացման մակարդակը: Միակ բանը, որ տեսնում են կուսակցությունները, այն է, որ իրենց հասարակությունը ենթակա է արդարությանը և այն ամենին, ինչ վերջինս ենթադրում է: Կասկած չկա նաև, որ նրանք գիտեն, թե ինչ են հասարակությունը, քաղաքական և տնտեսական հարաբերությունները» [6]:

Անտեղյակության քողի պարագայում անհատի սեփական շահախնդրության ենթադրությունը ստանում է նույն նպատակը, ինչ **գթասրտությունը**, այսինքն՝ մարդը կարեկցաբար նույնականանում է հասարակության յուրաքանչյուր անդամի հետ և հաշվի առնում նրանց բարիքը՝ որպես իր սեփական [5]:

Պետք է նշել, որ անտեղյակության քողը ընկած է արդարացի ինստիտուտների առաջացման գործընթացի չորս փուլերի հիմքում: Այս փուլերից յուրաքանչյուրի ընթացքում անտեղյակության քողը աստիճանաբար չքանում է՝ ենթադրյալ պայմանագրի մասնակիցներին տալով ավելի լիարժեք գիտելիքներ հասարակության և սեփական անձի վերաբերյալ, իսկ վերջին՝ չորրորդ փուլում քողո ամբողջությամբ վերանում է: Առաջին փուլում մտածողը ներկայացնում է նախնական դիրքի հասկացությունը: Հենց այց փուլում են հասարակության ներկայացուցիչների կողմից ընտրվում արդարության սկզբունքները: Արդարության սկզբունքներն ընտրելուց հետո սկսվում է երկրորդ փուլը՝ արդար քաղաքական սահմանադրության ստեղծումը, որը իր հերթին էլ ավելի պիտի ամրապնդի մարդկանց հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Քողազերծման երրորդ փուլում հիմնադրվում են տնտեսական և հանրային

քաղաքականության մեխանիզմները: Այս փուլում սահմանադրությունը հաստատում է հավասար քաղաքացիության և քաղաքական արդարության ապահով ընդհանուր կարգավիճակ: «Այստեղ և՛ սոցիալական, և՛ տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված է ամենաքիչ առավելություն ունեցողի երկարաժամկետ ակնկալիքների ավելացմանը հնարավորության անաչառ հավասարության պայմաններում» [6]: Վերջին՝ չորրորդ փուլում դիտարկվում են ֆորմալ արդարության խնդիրները՝ դատավորների ու պաշտոնյաների կողմից արդարացի օրենքների ու կանոնների անաչառ կիրառման վերաբերյալ: Այս փուլում բոլորը ունեն ամբողջական հասանելիություն բոլոր փաստերին: «Այստեղ, պարզ է, չկա ոչ մի պատճառ անտեղյակության քողի որևէ ձևի համար. բոլոր սահմանափակումները վերացվել են»,- գրում է Ռոլսը [6]:

Վերադառնալով նախնական դիրքին՝ կարող է հարց առաջանալ՝ ի վերջո ինչպես են հասարակության անդամները, ովքեր զուրկ են նման համալիր տեղեկատվությունից, ի զորու լինելու որոշարկել արդարության սկզբունքներ. հավասարության նախնական դիրքում պայմանագիր կնքողներն ունեն երեք հիմնական շահախնդրություն՝ արդարության արդյունավետ զգացում զարգացնելու, բարիքի հայեցակարգի ձևավորման, շտկման, հետամուտ լինելու, ինչպես նաև այդ հայեցակարգով հաջողելու: Ստացվում է՝ հավասարության նախնական դիրքը, որտեղ մարդիկ անտեղյակության քողի ներքո են, դառնում է ստատուս-քվո, և ուստի դրանում տեղի ունեցած համաձայնությունները անաչառ են: Սա էլ ապացուցում է «արդարությունն իբրև անաչառություն» վերտառության պատշաճությունը, քանի որ այն փոխանցում է այն գաղափարը, որ արդարության սկզբունքները գոյացել են նախնական դիրքում, որը հենց անաչառության դիրք է:

Ռոլսի՝ մոնիստական ավանդույթի հիման վրա կառուցած ուսմունքը, չնայած լինելով ամենահեղինակավորներից մեկը, այնուամենայնիվ, ունի բացթողումներ, որոնց էլ հետագայում անդրադարձել ու տարբեր տեսանկյուններից քննադատության են ենթարկել Մ. Ուոլզերը (փլուրալիզմի դիրքերից), Մ. Սենդելը (տեսական ոչ բավարար հիմքերի և դեոնթոլոգիական լիբերալզմի համար), և այլք: Արդարության ռոլսյան իմաստավորման կարևոր բացթողումներից մեկը բարիքների բաշխման խնդիրն է. մտածողի առաջարկած բաշխիչ համակարգը, թվում է, համընդհանուր է բոլոր բարիքների համար, և չկան առանձին բարիքների բաշխմանն ուղղված այլ ընթացակարգեր: Տեղին է նկատում

Հ. Թադևոսյանը, որ Ռոլսի տեսության շրջանակներում ոչինչ չի ասվում այն մասին, թե ինչպես պետք է վարվել բարիքների տարբեր տեսակների հետ [1]: Եվ իրոք, բաշխիչ համակարգի նման բացը մտացածին է դարձնում իրական պայմաններում մարդկային փոխհարաբերություններում բարիքների արդարացի բաշխման հնարավորությունը: Ու հարց է առաջանում. հնարավո՞ր է արդյոք, որ բոլոր բարիքները բաշխվեն միևնույն սկզբունքով: Փլուրալիզմի դիրքերից՝ Մ. Ուլոզերը, ի հակադրություն Ռոլսի, բացասական պատասխան է տալիս՝ հաշվի առնելով բարիքների բազմազանությունը. «Եվ բարիքների այս բազմազանությանը համապատասխանում է բաշխիչ համակարգերի, գործորդների և չափանիշների բազմազանություն» [8]: Այսինքն՝ ամեն բարիք պետք է բաշխի տարբեր մեխանիզմների ու համակարգերի միջոցով: Սա բաշխիչ արդարության կարծես ավելի իրատեսական մեկնաբանություն է, որը նաև ավելի հեշտությամբ կարող է կիրառվել մեր օրերում:

Եվս մեկ կարևոր հանգամանք. զարգացնելով «արդարությունը որպես անաչառություն» հայեցակարգը՝ Ռոլսը նպատակ ունի նաև ցույց տալ վերջինիս գերազանցությունը այլ վարդապետությունների՝ մասնավորապես ուտիլիտարիզմի և ինտուիցիոնիզմի հանդեպ:

Ուտիլիտարիզմը համարելով նպատակաբանական ուսմունք՝ մտածողը նշում է, որ արդարության իր առաջարկած ուսմունքը դեոնթոլոգիական է, որն ի տարբերություն ուտիլիտարիզմի, չի մեկնաբանում իրավունքը որպես բարիքը առավելագույնի հասցնելու միջոց [6]: Ուտիլիտարիզմում անկարևոր է, թե ինչպես են բավարարվածությունները բաշխվում հասարակության անդամների միջև. հավասարությունը կամ անաչառությունն ըստ այդմ, հաշվի չեն առնվում: Էականն այն է, որ հասարակության բավարարվածության/բարիքի հանրագումարը առավելագույնի հասցվի, ու այս ամենը, բնականաբար, դեմ էին արդարության ռոլսյան ուսմունքին: Բացի դրանից, ուտիլիտարիզմը բարոյական է համարում ընդհանուրի բարօրության համար առանձին անհատի բարիքի սահմանափակումը, ինչը, ինչպես արդեն նշվել է, սկզբունքորեն հակասում է Ռոլսի տեսությանը, որում անհատի երջանկությունը կամ բարիքը չի կարող զոհաբերվել հանուն համընդհանուր բարիքի կամ երջանկության: Ռոլսը պնդում է, որ նախնական դիրքում մարդիկ կմերժեին օգտակարության սկզբունքը՝ փոխարենը առաջնորդվելով արդարությունը որպես անաչառությամբ, քանի որ վերջինս սկսում է այն մտքից, որ յուրաքանչյուր անհատ ունի անձեռնմխելի բնական իրավունք արդարության

նկատմամբ, իսկ ուտիլիտարիստական տեսության մեջ անհատի բնական իրավունքները հարգվում են այնքանով, որքանով դրանք օգտակար են ընդհանուր բավարարվածությունը առավելագույնի հասցնելու համար: Քանի որ ուտիլիտարիզմը որևէ սահմանափակում չի դնում «լավ»-ի սահմանման հարցում, կարող է ստեղծվել իրավիճակ, երբ մարդիկ գոհունակություն գտնեն միմյանց հանդեպ խտրականությունից: Քանի որ սա կլիներ «լավ»-ը, հասարակությունը, հետևաբար, կփորձեր այն առավելագույնի հասցնել: Նման իրավիճակ Ռոլսի արդարության տեսության մեջ հնարավոր չէ, որովհետև անտեղյակության քողը ապահովում է, որ հավասար ազատության հիմնարար սկզբունքը միակ բանական ընտրությունը լինի: «Արդարությունը որպես անաչառություն հայեցակարգում «իրավունք» հասկացությունը նախորդում է «բարիք» հասկացությանը» [6],– գրում է մտածողը:

Արդարության ուսմունքի շրջանակներում Ռոլսն անդրադառնում է նաև ինտուիցիոնիզմին՝ նշելով, որ ինտուիցիոնիստական հայեցակարգերի դեպքում հանգում ենք **առաջնահերթության խնդրի (problem of priority):** Ստացվում է այնպես, որ ինտուիցիոնիզմի պարագայում ունենում ենք բազմակի սկզբունքներ, և դրանց միջև առաջնահերթություն նշանակելու այլ տարբերակ չկա, քան ինտուիցիային ապավինելը: **Ինտուիցիոնիզմը չի առաջարկում որևէ կառուցողական չափանիշ արդարության մրցակցային սկզբունքների պատշաճ շեշտադրումը որոշելու համար** [6]: Եվ քանի որ չկա խելամիտ էթիկական չափում կամ համապատասխան կանոն, որը կօգնի առաջնահերթություն սահմանել արժեքների/սկզբունքների միջև, ապա. «Արդարության ինտուիցիոնիստական հայեցակարգը, կարելի է ասել, **կիսահայեցակարգ է**» [6]: Պարզ է, որ բազում սկզբունքների առկայությունն ու առաջնահերթության սահմանելու չափումի բացակայությունը կարող են խարխլել համագործակցային հարաբերությունների մեջ գտնվող հասարակության հիմքերը:

Եզրակացություն

Ռոլսի «Արդարության տեսություն» աշխատությունը առանքային դեր ունի հանրային արդարության մերօրյա քննարկումներում: Ազատական գաղափարախոսության հիմքերի վրա կառուցված «արդարությունը՝ որպես անաչառություն» հայեցակարգը քննարկելիս հարկ է նկատել դերն ու կարևորությունը հասկացութային այն ապարատի, որը ներհատուկ է Ռոլսի տեսությանը. խոսքը մասնավորապես «հանրային պայ-

մանագիր», «հավասարության նախնական դիրք», նաև «անտեղյակության քող» եզրույթների մասին է, իսկ վերջիններս, ինչպես արդեն պարզ դարձավ, անկյունաքարային են արդարության վերոնշյալ տեսության համար: Տեսության առավելություններն էլ՝ ավելի ամուր հենքի վրա ներկայացնելու համար հատկանշական է դիտարկել այն ուտիլիտարիզմի և ինտուիցիոնիզմի հետ համեմատության առանցքի շուրջ: Կարևոր է նշել նաև, որ թեև դառնալով քննադատության թիրախ մի շարք մտածողների կողմից՝ Ռոլսի ուսմունքը շարունակում է մեծ հեղինակություն վայելել արևմտյան քաղաքական մտքում, ինչպես նաև հենակետ հանդիսանալ հանրային արդարության շուրջ կառուցվող քաղաքական ու փիլիսոփայական խոսույթում:

Գրականություն

1. Թադևոսյան Հ., Ջոն Ռոլսի «Արդարության տեսությունը» // Լրաբեր հասարակական գիտությունների, № 1, Երևան, 2015, էջ 253-259:
2. Մկրտչյան Ն., Արիստոտելի արդարության հղացքը և պատմական (ան)արդարության գաղափարը: Սոցիալական իրականության շուրջ հայկական տիրապետող տրամասության կառուցումները // Արիստոտելի ժառանգությունը հայոց մշակույթի համատեքստում, Գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2017, էջ 94-99:
3. Aristotle, The Nicomachean Ethics. Kegan Paul, Trench, Trübner & Co. Ltd. London. 1906, 359 p.
4. Berlin I., Two Concepts of Liberty, In: Liberty, ed. by Henry Hardy. Oxford. Oxford University Press. 2002, 416 p.
5. Kymilcka W., Contemporary Political Philosophy. An Introduction. Second Edition. Oxford University Press. 2002, 510 p.
6. Rawls J., A Theory of Justice. Cambridge. Massachusetts. Harvard University Press. 1971, 538 p.
7. Rawls J., Justice as Fairness // The Philosophical Review. Ithaca. 1958. Vol. 67. N 2. p. 164-194.
8. Walzer M., Spheres of Justice: A Defense of Pluralism and Equality. Basic Books Inc. New York. 1983, 345 p.

Основы концепции «Справедливость как честность» Джона Ролза: критика утилитаризма и интуитивизма

Гамлет Симонян

Резюме

Ключевые слова: *занавес неведения, общественный договор, исходное положение равенства, общество, равенство, благо, распределение*

Актуальность и необходимость социальной справедливости как философского феномена никогда не преувеличивается. В настоящее время разнообразие и децентрализация вопросов, связанных с этой темой, доказывают наличие огромных пробелов в разработке (принятии) и развитии различных механизмов, процедур в социально-экономической и политической сферах как западных стран, так и Армении. В этом смысле теория Ролза пытается предоставить уникальное решение ряда проблем, связанных с социальной справедливостью, в частности, обращаясь к социальным институтам и их надлежащему функционированию. Одна из задач данной работы – показать определение справедливости как ключевого социально-философского явления в контексте политической философии, а также выявить основы, необходимые для ее функционирования по Ролзу. Цель статьи – представить основы теории посредством критического анализа, связать их с процессами внутри общества (эти процессы в основном относятся к распределению благ), показать превосходство учения Ролза о справедливости над другими моральными учениями, а также рассмотреть некоторые особенности, за которые Ролза критиковали.

The Cornerstones of John Rawls' Concept of "Justice as Fairness": Criticism of Utilitarianism and Intuitionism

Hamlet Simonyan

Summary

Key words: *veil of ignorance, social contract, initial position of equality, society, equality, good, distribution*

The urgency and necessity of social justice as a philosophical phenomenon is never exaggerated. Nowadays, the diversity and decentralization of issues related to the topic prove that there are huge gaps in the creation (adoption) and development of various mechanisms and procedures in socio-economic and political spheres of both the Western countries and Armenia. In this sense, Rawls' theory attempts to provide a unique solution to a number of problems related to social justice, especially by referring to social institutions and their proper functioning. One of the tasks of this article is to show the determination of justice as a key socio-philosophical phenomenon in the context of political philosophy, as well as to identify the cornerstones necessary for its functioning, according to Rawls. The purposes of the article are to present the foundations of the theory through critical analysis by linking them to processes occurring within a society (these processes mostly refer to distribution of goods), to show the superiority of Rawls' theory of justice over other moral doctrines, as well as to address some features for which Rawls has been criticized.

Ներկայացվել է 09.09.2021 թ.
Գրախոսվել է 16.09.2021 թ.
Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.